ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Միրզոյան,

1.Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածով և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 1-ին, 4-8-րդ մասերով՝ խնդրում ենք Ձեզ, 2021թ-ի հուլիսի 30-ին, ժամը 12:00-ին գումարել Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան, հետևյալ օրակարգով՝

1) «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթ (Կ-905-22.03.2021-ՏՀ-011/1),

(երկրորդ ընթերցում):

2) «Պետական սահմանի մասին» օրենքում լրացում կատարելու մասին», Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթ (Կ-903-22.03.2021-ՊԱ-011/1),

(երկրորդ ընթերցում):

3) «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ (Կ-900-16.03.2021-ՊԻ-011/1),

(երկրորդ ընթերցում):

4) «ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ (Կ-892-09.03.2021-ՏՏԳԲ-011/1),

(երկրորդ ընթերցում):

5) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթ (Պ-1012-29.07.2021-ՊԻ-011/0),

(առաջին ընթերցում),
(երկրորդ ընթերցում):

6) «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», ««Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», ««Կրթության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթ (Կ-1011-29.07.2021-ԳԿ-011/0),

(առաջին ընթերցում),
(երկրորդ ընթերցում):

2. Արտահերթ նստաշրջանը նախաձեռնող պատգամավորների ներկայացուցիչ նշանակել Վլադիմիր Վարդանյանին:

3. Կից ներկայացնում ենք՝
1) Օրակարգում ընդգրկված նախագծերը և կից նյութերը,

2) «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 6-րդ մասի և 8-րդ մասի 2-րդ կետին համապատասխան՝ 2021թ-ի հուլիսի 30-ին սահմանված օրակարգով արտահերթ նստաշրջան գումարելուն, ինչպես նաև համապատասխան նախագծերի փաթեթներն առաջին և երկրորդ ընթերցմամբ քննարկելու մասին հարցերն արտահերթ նստաշրջանի օրակարգում ընդգրկելու վերաբերյալ Ազգային ժողովի խորհրդին միջնորդություն ներկայացնելու մասին «Իմ քայլը» խմբակցության որոշումը,

3) «2021թ-ի հուլիսի 30-ին Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի օրակարգային հարցերի քննարկման հատուկ ընթացակարգի մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծը:

Հեր Մաքրեաց (052)

(083)
(036)
(030)
(042)
(079)
(015)
(007)
(039)
(026)
(041)
(027)
(055)
(086)
(014)
(021)
(038)
(055)
(056)

Հովհաննիսյան Արարատ (003)
Միրզոյան Փարպիսզադե (031)
Գևորգյան Գևորգ (019)
Հակոբյան Հասմիկ (48)
Հարությունյան Դեմիրտեմիրյան (022)
Խաչատրյան Հովհաննես (053)
Մեսրոպ Հակոբյան (050)
Գրիգոր Գրիգոր (025)
Գրիգորյան Գրիգորյան (043)
Երեմյան Գառ (009)
Թադևոսյան Գևորգ (057)
Ավետիսյան Ավետիսյան (017)
Գասպարյան Գրիգոր (020)
Հովսեփյան Եզրասպյան (066)
Հարությունյան Գեղամյան (029)
Գրիգորյան Գրիգորյան (075)
Գասպարյան Գրիգորյան (005)
Ալեքսանյան Ալեքսանյան (058)
Գրիգորյան Գրիգոր (013)
Բարսեղյան Բարսեղյան (001)
Հակոբյան Հակոբյան (097)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄԸ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-ԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ ԵՐԿՈՒ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 6-րդ մասով և 8-րդ մասի 2-րդ կետով «Իմ քայլը» խմբակցությունը որոշում է.

2021թ. հուլիսի 30-ին, ժամը 12:00-ին նախաձեռնողների սահմանած օրակարգով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը (Կ-905-22.03.2021-ՏՀ-011/1), «Պետական սահմանի մասին» օրենքում լրացում կատարելու մասին», Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը (Կ-903-22.03.2021-ՊԱ-011/1), «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» (Կ-900-16.03.2021-ՊԻ-011/1), «ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Կ-892-09.03.2021-ՏՏԳԲ-011/1)ՀՀ օրենքի նախագծերը երկրորդ ընթերցմամբ,

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» (Պ-1012-29.07.2021-ՊԻ-011/0), «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», ««Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», ««Կրթության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» (Կ-1011-29.07.2021-ԱՍ-011/0) ՀՀ օրենքների նախագծերի փաթեթները առանց գլխադասային հանձնաժողովի եզրակացության առաջին ընթերցմամբ, ինչպես նաև այդ նախագծերի փաթեթը երկրորդ ընթերցմամբ քննարկելու և Ազգային ժողովի արտահերթ նիստ գումարելու վերաբերյալ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

1.«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 16.05.2019թ. «ՀՀ կառավարության 2019 - 2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 650-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 273.2-րդ կետի եւ ՀՀ վարչապետի 01.06.2019թ. N 666-Լ որոշմամբ հաստատված ԵՄ եւ ատոմային էներգետիկայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջեւ կնքված համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզի «Տրանսպորտ» բաժնի 25-րդ, 26-րդ, 27-րդ եւ 29-րդ կետերի կատարման ապահովմամբ:

«Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» համաձայնագրի պահանջներին համապատասխան՝ 2011 թվականից Հայաստանի Հանրապետությունում ներդրվել եւ գործարկվել է թվային տախոգրաֆի համակարգը, որով կարգավորում է վարորդների աշխատանքի եւ հանգստի ռեժիմները:«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով Համակարգը կիրառվում է միայն ավտոմոբիլային տրանսպորտով միջպետական փոխադրումներ իրականացնող բեռնատար տրանսպորտային միջոցներում և ավտոբուսներում:

Առաջարկվում է համապատասխան փոփոխություններ կատարել «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքում, դրանում սահմանելով դրույթներ թվային տախոգրաֆի համակարգը առևտրային նպատակներով ուղեւորափոխադրումներում եւ բեռնափոխադրումներում ընդգրկված տրանսպորտային միջոցներում կիրառելու վերաբերյալ:

Օրենսդրական փոփոխությամբ նախատեսվում է սահմանել վարորդների հանգստի եւ աշխատանքի ժամանակահատվածները, թվային տախոգրաֆի համակարգը կիրառել ընդհանուր օգտագործման ուղեւորափոխադրումներ եւ բեռնափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցներում:Սահմանել այն բացառությունները, որոնց դեպքում չի կիրառվելու թվային տախոգրաֆի համակարգը:

2.«Պետական սահմանի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության

օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկայումս օրենքով կանոնակարգված չէ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի սահմանային շերտում տեսալուսանկարահանող սարքերի եւ անօդաչու թռչող սարքերի օգտագործումը: Բացի այդ, տեսալուսանկարահանող սարքերի և անօդաչու թռչող սարքերի օգտագործումը կարող է խիստ բացասական անդրադառնալ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի պահպանմանը, որի կապակցությամբ նպատակահարմար է սահմանային շերտում տեսալուսանկարահանող սարքերի, այդ թվում՝ անօդաչու թռչող սարքերի օգտագործման համար կիրառել որոշակի սահմանափակումներ:«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է սահմանային շերտ մուտք գործելու կամ այնտեղ գտնվելու, ինչպես նաեւ բնակվելու կամ գրանցվելու կանոնները խախտած անձանց նկատմամբ վարչական ներգործության միջոցներ կիրառելու հիմքերը հստակեցնելու անհրաժեշտությամբ:«Պետական սահմանի մասին» օրենքում լրացում մասին» օրենքի նախագծի ընդունմամբ կկանոնակարգվի տեսալուսանկարահանող սարքերի և անօդաչու թռչող սարքերի օգտագործումը Հայաստանի Հանրապետության պետական սահմանի սահմանային շերտում:«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունմամբ կհստակեցվի սահմանային շերտ մուտք գործելու կամ այնտեղ գտնվելու, ինչպես նաեւ բնակվելու կամ գրանցվելու կանոնները խախտած անձանց նկատմամբ վարչական ներգործության միջոցներ կիրառելու հիմքերը:

3. Սահմանադրական դատարանն իր՝ 06.10.2015 ՍԴՈ-1231 որոշմամբ 196-րդ հոդվածի «ինչպես նաև այդ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները» դրույթը ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածների եւ 92-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող և անվավեր: Սակայն, այս որոշման ուժի մեջ մտնելուց հետո որևէ կարգավորում, առ այն, թե ինչ կարգով են բողոքարկվում նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու գործերով կայացված միջանկյալ ակտերը, օրենսգրքում չի լրացվել: Ներկայացված նախագծով առաջարկվում է Վարչական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածում նախատեսել նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու գործերով կայացված միջանկյալ ակտերի բողոքարկման վերաբերյալ դրույթ: Մանսավորապես՝ 141-րդ հոդվածը վերաբերում է վերաքննիչ դատարանում գործի քննության կարգին և այս հոդվածում սահմանված են դրույթներ, որոնք սահմանում են վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննելու և որոշումները կայացնելու կարգը: Այս հոդվածի 2-րդ մասում առաջարկվում է լրացնել կարգավորում առ այն, որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննվում են 5 դատավորի կազմով:

4.«ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացումը պայմանավորված է Տարածքային զարգացման եւ շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի 2020 թվականի հուլիսի 7-ի նիստի N ԿԱ/131-2020 արձանագրության 1-ին կետի 2-րդ ենթակետի կատարումն ապահովելու հանգամանքով: Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է քաղաքացիների կամ իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը սեփականատիրոջ նախաձեռնությամբ ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության, գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսությունների և ձկնաբուծական արհեստական լճակների համար փոփոխելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո այդ հողամասի կամ դրա մասի նպատակային կամ գործառնական նշանակությունը սեփականատիրոջ նախաձեռնությամբ սահմանված կարգով այլ տնտեսությունների կամ շինությունների կառուցման և սպասարկման համար 10 տարվա ընթացքում փոփոխելու դեպքում փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքի և մինչեւ հողամասի նպատակային նշանակությունը ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության, գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսությունների և ձկնաբուծական արհեստական լճակների համար փոփոխելը ունեցած հողամասի կադաստրային արժեքի առկա տարբերության համայնքային բյուջե մուծելու նոր պահանջով:

Առաջարկվող փոփոխություններով՝ նախատեսվում է կադաստրային արժեքի տարբերության վճարման պայման սահմանել այն դեպքերի համար, երբ առանց հողամասի կադաստրային արժեքների տարբերության վճարման հողամասի նպատակային նշանակությունը փոխելուց հետո հողամասի սեփականատիրոջ նախաձեռնությամբ նախատեսվում է կրկին փոխել հողամասի նպատակային նշանակությունը կամ շինությունները, առանց դրանց նպատակային նշանակության փոփոխման, թույտվությամբ օգտագործել նշված տնտեսությունների կարիքների կամ վարման հետ չկապված (օրինակ՝ որպես արհեստանոց, տարբեր տիպի արտադրամաս, սպանդանոց, ավտոպարկ եւ այլն):

5. Հանրային տիրույթում մարդկային փոխհարաբերությունների, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների և համացանցային տիրույթի մշտադիտարկումը վկայում է հայհոյանք և ծանր վիրավորանքի այլ դրսևորումներ պարունակող բառապաշարի համատարած օգտագործման և դրա հետևանքով մարդկային փոխհարաբերությունների որակազրկման, այդ բառապաշարի թիրախավորված օգտագործման հետևանքով անձի կամ անձանց խմբի նկատմամբ ճնշում գործադրելու փորձերի և դրանց հետևանքով առաջ եկող այլ անցանկալի երևույթների մասին:

Ուսումնասիրությունները վկայում են նաև, որ շեշտակիորեն նվազել է հանրային իշխանության և ընդհանրապես հանրային գործունեություն ծավալող անձանց նկատմամբ հարգանքը, ինչի վկայությունն այն է, որ հաճախակիացել են դեպքերը (հաճախ նաև համացանցի միջոցով, զանգվածային լրատվության միջոցներով), երբ անձին վիրավորում են՝ կապված վերջինիս լրագրողական կամ հրապարակախոսական գործունեության կամ ծառայողական պարտականությունների կատարման կամ հանրային ծառայության կամ հանրային պաշտոն զբաղեցնելու, հասարակական կամ քաղաքական գործունեության հետ: Ընդ որում, դա դրսևորվում է հաճախ հրապարակայնորեն և ամենակարևորը՝ ուղղակիորեն պայմանավորված է լինում տվյալ անձի հանրային գործունեությամբ: Այսինքն, անձին վիրավորում են ոչ թե նրան դիտարկելով որպես իրավահարաբերությունների մասնավոր սուբյեկտ, այլ որպես հանրային գործունեություն իրականացնող անձի:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև 2021թ. հուլիսի 17-ի ՍԴՈ-1606 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված այն իրավական դիրքորոշմամբ, որի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ վերլուծված՝ վարչապետի սահմանադրական կարգավիճակը և լիազորությունների ծավալը Հայաստանի սահմանադրական ժողովրդավարության պայմաններում, ինչպես նաև քաղաքական մեծամասնության ունեցած ազդեցությունը հանրային իշխանության մարմինների համակարգում, ընդգծում է նրանց կողմից գործուն միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը հայաստանյան քաղաքական խոսքում՝ ատելության, բռնության, վիրավորանքի և արժանապատվությունը նվաստացնելու կասկած հարուցող խոսքի և վարքագծի որևէ դրսևորում, ներառյալ նաև նախընտրական քարոզչության ժամանակ հնչեցվող խոսքում բացառելու նպատակով [ընդգծումը մերն է]:»: ՀՀ սահմանադրական դատարանի հիշյալ իրավական դիրքորոշումը ընդգծում է հանրային իշխանության հստակ պոզիտիվ պարտականությունը՝ պայքարելու վիրավորանքի և արժանապատվությունը նվաստացնելու երևույթների դեմ գործուն միջոցառումներ ձեռնարկելով, որպիսին ստեղծված իրավիճակում կարող է հանդիսանալ ծանր վիրավորանքի քրեականացումը:

Նախագծի ընդունմամբ քրեաիրավական առավել արդյունավետ պաշտպանության մեխանիզմներ կնախատեսվեն անձանց պատվի և արժանապատվությանը սպառնացող առավել վտանգավոր դրսևորումների համար:

6. Համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքներում, իրավական հիմք, լիազորող նորմ ապահովելով՝ հնարավորություն կառաջանա Կառավարության որոշմամբ սահմանելու բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր, ինչպես նաև նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում սովորողների առանձին խմբեր, որոնք կարող են օգտվել պետության կողմից տրամադրվող նպաստից՝ լրիվ կամ մասնակի: Նախագծերով առաջարկվող փոփոխությունների արդյունքում Կառավարության կողմից կսահմանվեն համապատասխան կարգեր, որոնցով կկարգավորվեն ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողներին, **սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների ուսանողներին, մարտական գործողություններին մասնակցած ուսանողներին, սահմանված կարգով առկա ուսուցմամբ բակալավրի կամ ինտեգրացված կրթական ծրագրով ընդունված** երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողներին տրվող նպաստների չափերը՝ ինչպես նաեւ կամրագրվեն առաջադիմության շեմեր (բուհերում՝ ՄՈԳ), ըստ որոնց կնախատեսվեն համապատասխան փոխհատուցման չափերը՝ նպատակ ունենալով խրախուսել եւ կարեւորել նաեւ սովորողների առաջադիմությունը, ապահովել կրթության որակը:

Օրենքի նախագծի ընդունմամբ, ներկայացված փոփոխությունների և լրացումների արդյունքում Կառավարությանը կվերապահվի լիազորություն սահմանելու պետության կողմից ֆինանսական աջակցություն ստացող ուսանողների որոշակի այլ խմբեր, կապահովվի բարձրագույն և հետբուհական մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ընդգրկված խմբերի մեծացումը, սոցիալական տարբեր խմբերի համար հավասար մատչելիության բարձրացումը:

«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ. ՄԱԿՈՒՆՑ**